ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
2024

ԱՆՎՃԱՐ ԻՐԱՎԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԵՒ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅՈՒՆ

2024թ. ընթացքում իրավական աջակցություն է տրամադրվել 460 գործով, որից՝ 67 գործով իրականացվել է դատական ներկայացուցչություն:

Իրավաբանական աջակցության շրջանակներում կազմվել է շուրջ 459 իրավաբանական բնույթի փաստաթուղթ.



Մարդու իրավունքների Եվրոպական դատարանը 2024 թվականի հոկտեմբերի 9-ի Իշխան Աղաջանյանն ընդդեմ Հայաստանի վճռով հաստատել է Մարդու իրավունքների եւ ազատությունների եվրոպական Կոնվենցիայի 10-րդ հոդվածի խախտման փաստը:

Գրանցած հաջողություններ քրեական, վարչական և քաղաքացիական գործերով

Քրեական գործեր



Վարչական և քաղաքացիական գործեր



ԱՆՎՃԱՐ ԻՐԱՎԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՈՒՄ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻՑ ԲՌՆԻ ՏԵՂԱՀԱՆՎԱԾ ԱՆՁԱՆՑ

160 գործով տրամադրվել է անվճար իրավական աջակցություն
Ժամանակահատված՝ 2023թ.-ի դեկտեմբերից մինչև 2024թ.հուլիս

Ուսումնասիրվել է շուրջ 65 անձի վերաբերող փաստաթուղթ

- Կազմվել է 45 դիմում
- Կազմվել է 6 վերադաս բողոք
- Կազմվել է 8 տեղեկատվության հարցում
- Կազմվել է 1 հայցադիմում

Կազմակերպության անունից պետական մարմիններին են ուղարկվել

- Ավելի քան 20 հարցումներ, դիմումներ, դիրքորոշումներ և առաջարկներ
- 2 հայցադիմում, ընդհամ՝ Ներքին գործերի նախարարության և Արտաքին գործերի նախարարության՝ տեղեկատվություն տրամադրելու պահանջի վերաբերյալ

Կազմակերպության կողմից ներկայացվել են հետևյալ առաջարկությունները՝

- Առաջարկ 2023թ.-ի սեպտեմբերի 19-ի պատերազմական գործողությունների հետևանքով քաղաքացիական անձանց շրջանում զոհերի, անհայտ կորածների ընտանիքներին և հաշմանդամություն ձեռք բերած անձանց աջակցության ծրագիր հաստատելու մասին
- Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված անձանց աջակցության ծրագրերի շահառուների ցանկը վերանայելու և ընդլայնելու վերաբերյալ

ԱՆՎՃԱՐ ԻՐԱՎԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐՎԵԼ Է ՀԵՏԵՒՅԱԼ ՀԱՐՑԵՐԻ ՇՈՒՐՋ

- ՀՀ-ում գտնվող հասցեներում հաշվառվելու վերաբերյալ հարցեր,
- Բռնի տեղահանումից անմիջապես հետո ՀՀ սահմանը հատելիս անձանց հաշվառումը գրանցած չլինելու/ չփաստաթղթավորելու վերաբերյալ խնդիրներ,
- Մեծահասակների և անչափահասների՝ ՀՀ քաղաքացիություն ձեռք բերելու հետ կապված հարցեր,
- Կենսաթոշակների նշանակման, Լեռնային Ղարաբաղում նշանակված կենսաթոշակների վերականգնման վերաբերյալ հարցեր,
- Ֆունկցիոնալության գնահատման /հաշմանդամության խմբերի սահմանման և նպաստի նշանակման, ԼՂՀ-ում նշանակված նպաստի վերականգման վերաբերյալ հարցեր,
- Բնօրինակ փաստաթղթերի վերականգնման հետ կապված հարցեր,
- Երեխայի ծննդյան միանվագ նպաստ ստանալու իրավունքից օգտվելու վերաբերյալ հարցեր,
- Աջակցության ծրագրերի շահառու չհամարելու հետ կապված խնդիրներ,
- Ժառանգության ընդունման վերաբերյալ հարցեր

ԻՊԱՍ-ը գործընկեր կազմակերպությունների հետ համատեղ շարունակել է փաստագրել և միջազգային հարթակներում ներկայացնել Արցախի և ՀՀ բնակչության դեմ Ադրբեջանի կողմից մարդու իրավունքների խախտումները և պատերազմական հանցագործությունները

«Ինչո՞ւ Լեռնային Ղարաբաղում հայեր չկան» զեկույցը փաստում է, որ Ադրբեջանը միտումնավոր և հաշվարկված գործողությունների միջոցով Լեռնային Ղարաբաղի հայ բնակչությանը ենթարկել է բռնի տեղահանման և էթնիկ զտման:

Զեկույցը ներկայացնում է Լեռնային Ղարաբաղում ապրող էթնիկ հայերի իրավիճակը 2020 թվականի Երկրորդ Լեռնային Ղարաբաղի պատերազմի ավարտից մինչև 2023 թվականի սեպտեմբերյան ադրբեջանական վարչակարգի ռազմական հարձակումը, ինչպես նաև դրա հետևանքները:

Զեկույցը բացահայտում է բազմաթիվ խախտումներ մարդու իրավունքների, միջազգային մարդասիրական իրավունքի և միջազգային քրեական իրավունքի նկատմամբ, որոնք իրականացվել են ադրբեջանական իշխանությունների կողմից՝ ուղղված Լեռնային Ղարաբաղի էթնիկ հայ բնակչության դեմ: Դրանք ներառում են արտադատական սպանություններ, բազմամսյա շրջափակում, հարկադիր տեղահանություն, ինչպես նաև տեղահանությունից հետո մշակութային ջնջման և գույքի ոչնչացման քաղաքականություն:

Փաստահավաք զեկույցը հաստատում է՝ Լեռնային Ղարաբաղում փաստագրված գործողությունները հանդիսանում են ռազմական հանցագործություններ և մարդկության դեմ հանցագործություններ:

ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄ

Դատավորներին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ վարույթների մշտադիտարկում և ուսումնասիրություն

01

Դատավորների ընտրության և նշանակման գործընթացի մշտադիտարկում և ուսումնասիրություն

02





ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԻՆՍՏԻՏՈՒՏՆԵՐ

Ուսումնասիրվել է ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի գործունեությունը



Դիտարկվել է ՀՀ հակակոռուպցիոն դատարանի դատավորների ընտրության գործընթացը

Դիտարկվել է 2023 թվականի նոյեմբերից մինչև 2024 թվականի մայիսի 31-ը ՀՀ հակակոռուպցիոն դատարանում քննվող ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձնման վերաբերյալ վարույթներով 100 նիստ: Մշտադիտարկման արդյունքները ներկայացնող զեկույցը գտնվում է վերջնականացման փուլում:

ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅՈՒՆ

Դիտարկվել է ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձմանն ուղղված գործառույթներ իրականացնող դատախազների թեկնածությունների ցուցակի համալրման նպատակով կազմակերպված բաց մրցույթը:

Մշակվել է դատախազության բարեփոխումների Հայեցակարգ

Ուսումնասիրվել է դատախազների գործունեության գնահատման միջազգային փորձն ու ՀՀ օրենսդրությունն ու պրակտիկան:



Զեկույց
Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին ՀՀ օրենքով նախատեսված գործառույթներ իրականացնող դատախազների թեկնածությունների ցուցակը համալրելու համար **2024թ.** անցկացված բաց մրցույթի դիտարկման արդյունքները

ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ներկայացվել են կարծիք-առաջարկներ

- հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին,
- Դատավարության մասնակիցների իրավունքների անհամաչափ սահմանափակման ռիսկերի վերաբերյալ,
- Դատախազության մասին օրենքում փոփոխություն կատարելու մասին ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ,
- Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին օրենքում փոփոխություն կատարելու մասին ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ,
- Տեղեկատվության ազատության մասին ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ,

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Ոստիկանության ծառայողների կողմից դրսևորվող շարունակական բռնությունների և խոշտանգումների վերաբերյալ,
- Մայիսի 27-ի ոստիկանության գործողությունների վերաբերյալ,
- հունիսի 12-ին Բաղրամյան-Դեմիրճյան փողոցների խաչմերուկում «Տավուշը հանուն հայրենիքի» շարժման կազմակերպած հավաքի ընթացքում ՀՀ ոստիկանության անօրինական գործողությունների վերաբերյալ,
- Հայաստանն ընդդեմ Ադրբեջանի միջպետական գանգատներից հրաժարվելու անթույլատրելիության վերաբերյալ,
- Տավուշի մարզի հատվածում Հայաստանի Հանրապետության և Ադրբեջանի Հանրապետության միջև սահմանազատման և սահմանագծման մեթոդների և տեմպերի վերաբերյալ,
- Հայաստան-ԵՄ վիզա ազատականացման գործընթացի վերաբերյալ,
- «Ոստիկանության մասին» օրենքում և հարակից օրենքներում լրացումներ կատարելու մասին օրենքների նախագծերի վերաբերյալ:
- Բարձրագույն դատական խորհրդի ոչ դատավոր անդամի թեկնածուի առաջադրման անթույլատրելիության վերաբերյալ:

ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

«Մարդու իրավունքները վարչական վարույթում» երկօրյա դասընթաց՝ Երևանի քաղաքապետարանի և Երևանի վարչական շրջանների աշխատակազմերի աշխատակիցների համար

«Հանրային աշխատանքները՝ որպես վերականգնողական արդարադատության արդյունավետ միջոց» ենթադրամաշնորհային ծրագրի եզրափակիչ շնորհանդեսը և հանրային քննարկում

«ՀՀ Դատախազության բարեփոխումների հիմնահարցերը» թեմայով քննարկում

ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ, ՆԵՐԳՐԱՎԱԾՈՒԹՅՈՒՆ

Ասուլիսներ, հանրային քննարկումներ, հարցազրույցներ **49**

32 Մասնակցություն միջազգային հարթակներում, համաժողովներին, հանդիպումներ դեսպանների և ոլորտային պատասխանատուների հետ

04

Կազմակերպությունը նեգրավվել է.

- Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող 2023-2025թթ. Գործողությունների ծրագրի Համակարգող խորհրդի կազմում
- ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանին առընթեր Զինծառայողների իրավունքների պաշտպանության հարցերով փորձագիտական խորհրդի կազմում

Կազմակերպությունը անդամակցել է.

- «Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի» CEPA Քաղաքացիական հասարակության պլատֆորմին
- Միջազգային քրեական դատարանի կոալիցիային



ԿԱՊ ՄԵԶ ՀԵՏ

Հեռախոս
+374 98 505 303, 010 505 303

էլ. փոստ
info@prwb.am

Կայքէջ
Info@prwb.am

Հասցե՝ Ամիրյան 11